ԱՐՄԱՏԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Կյանք Հիմնված Աստծո Սիրո Վրա
Մաս 3

«Աստծո արքայությունն ուտելիք և խմելիք չէ. այլ արդարություն և խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգովը:» Հռովմայեցիս 14:17

Պողոս:«Կկենամ և կմնամ ձեր ամենի հետ, որ դուք զարգանաք և ուրախ լինեք հավատքով:» Փիլիպպեցիս 1:25

«Ուրախ եղեք Տերումն ամեն ժամանակ. դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք:» Փիլիպպեցիս 4:4

Արմատական Ուրախության Վեց Պատճառները

Երբ ես Քրիստոսի մեջ եմ... (Հռովմայեցիս 8)

1. Աստված կատարելապես ներել է ինձ

«Դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսումը լինողների համար.» Հռովմայեցիս 8:1

«Թող իմ սիրտը ցնծա քո փրկությունովը.» Սաղմոս 13:5

2. Աստված ինձ հավիտենական կյանք է տվել

«Եվ եթե Հիսուսին մեռելներից հարուցանողի Հոգին ձեզանում բնակված է, ապա Քրիստոսին մեռելներից հարուցանողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգովը, որ ձեզանում բնակված է:» Հռովմայեցիս 8:11

«Որովհետև նրանց որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանակից լինելու. որ նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ:» Հռովմայեցիս 8:29

3.Աստված օգնում է, որ ինձ համար ամեն բան դեպի բարին գործակից լինի

«Բայց գիտենք, որ Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին նրանց՝ որ նախասահմանելովը կանչված են:» Հռովմայեցիս 8:28

«Մտիկ տանք հավատքի զորագլուխին և կատարողին՝ Հիսուսին, որ իր առաջին դրված ուրախության փոխանակ խաչը հանձն առավ...» Եբրայեցիս 12:2

«Նեղություն և ցավ գտան ինձ. քո պատվիրանքներն իմ ուրախությունն են:» Սաղմոս 119:143

4. Աստված իմ կողմն է

«Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ.» Հռովմայեցիս 8:31

«Ո՞վ է որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի. Աստված է որ արդարացնում է:» Հռովմայեցիս 8:33

«Հաղթում ենք նրա միջոցովը՝ որ մեզ սիրեց.» Հռովմայեցիս 8:37

«Այս բանը խոսում եմ աշխարհքումը, որ իմ ուրախությունը կատարյալ ունենան իրանց անձերումը:» Հովհաննես 17:13

5. Աստված պիտի հոգա իմ բոլոր կարիքները

«Որ իր Որդին էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց նրան. էլ ինչպե՞ս նրա հետ ամեն բան չի շնորհել մեզ:» Հռովմայեցիս 8:32

«Եվ իմ Աստվածը լրացնի ձեր ամեն կարոտությունն իր հարստության չափովը՝ փառքով Քրիստոս Հիսուսումը:» Փիլիպպեցիս 4:19

«Մինչև հիմա ոչինչ չխնդրեցիք իմ անունովը. խնդրեցեք և կառնեք, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի:» Հովհաննես 16:24

6. Աստված երբեք չի դադարի ինձ սիրելուց

«Որովհետև հաստատ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կյանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանություններ, ոչ զորություններ, ոչ ներկա բաներ, ոչ գալու բաներ, և ոչ բարձրություն, ոչ խորություն, և ոչ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սերիցը՝ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսումն է:» Հռովմայեցիս 8:38-39

«Քո երեսի առաջին ուրախությունների լիություն կա.» Սաղմոս 16:11

«Դարձյալ տուր ինձ քո փրկության ուրախությունը.» Սաղմոս 51:12

Հաջորդ Կիրակի

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՍԵՐ

Հովիվ Սարօ Խաչիկեան